

ԵՄ օրենսդրության և դատական համագործակցության ոլորտում
քաղաքականության համապատասխանեցման գործընթացը և
Թարգմանությունների կենտրոնի համար դատաիրավական ոլորտին առնչվող
եզրաբանական կարողությունների զարգացում

Ընդհանուր տեղեկատվություն

<u>Ոլորտ՝</u>	արդարադատություն
<u>Տևողություն՝</u>	24 ամիս
<u>Իրականացման</u>	
<u>ժամանակահատված՝</u>	2012թ. հոկտեմբեր - 2014թ. օգոստոս
<u>Բյուջե՝</u>	1 մլն եվրո

Շահառու հաստատություն՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության թարգմանությունների կենտրոն 

ԵՄ անդամ գործընկեր պետություններ՝

Առաջատար գործընկեր՝

Միջազգային իրավական համագործակցության
գերմանական հիմնադրամ (IRZ), Գերմանիա 

Կրտսեր գործընկեր՝

Լատվիայի արդարադատության
նախարարություն, Լատվիա 

Ծրագրի նկարագիր

Նպատակներ՝

Բարելավել Արդարադատության նախարարության ներքին իրավական
դաշտը, կազմակերպչական կառուցվածքը և անձնակազմի
որակավորումը, ինչը հնարավորություն կընձեռի աշխատել ԵՄ
կիրառելի չափանիշներին և լավագույն փորձին արդարադատության
ոլորտի հետագա համապատասխանեցման ուղղությամբ:

Բաղադրիչներ՝

Բաղադրիչ I՝ Գնահատել Արդարադատության նախարարության և
Թարգմանությունների կենտրոնի ներկա իրավական դաշտը,
կազմակերպումը և ընթացակարգը՝ արդարադատության ոլորտում
ներդաշնակության կարիքների հետ միասին, հնարավոր
նորարարությունները բացահայտելու համար, որոնք կարող են
բարելավել ներդաշնակեցման գործընթացի արդյունավետությունը:

Բաղադրիչ II՝ Աջակցություն արդարադատության նախարարությանը
մասնագիտական հմտությունների հզորացմանը, հիմնարար
գիտելիքների ձեռքբերմանը և արդարության ոլորտում

ներդաշնակեցմանն ուղղված բարեփոխումների իրականացման առաջնահերթությունների որոշմանը:

Բաղադրիչ III՝ Բարելավել Թարգմանությունների կենտրոնի արդյունավետությունը ԵՄ օրենսդրության և Եվրոպական միության չափանիշներին համապատասխանեցման համար այլ իրավական նյութերի թարգմանության նպատակով:

Ձեռք բերված արդյունքներ՝

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

ա) Ուղեցույցներ են մշակվել ընտրված չորս իրավական ոլորտների իրավական համապատասխանեցման և վերլուծության համար՝ բաժնետիրական ընկերությունների մասին օրենք, Միջազգային իրավական համագործակցություն քրեական և քաղաքացիական հարցերում, տվյալների պաշտպանություն

բ) Նախարարության անձնակազմի կողմից համապատասխանեցման վերաբերյալ վերապատրաստման արդյունքում մշակվել են նոր իրավական ակտեր և չորս իրավական ակտերի փոփոխություններ - Բաժնետիրական ընկերությունների մասին օրենք, Տվյալների պաշտպանության մասին օրենք, Քրեական և քաղաքացիական օրենսգրքեր,

գ) Արդարադատության նախարարության 25 մասնագետներ վերապատրաստվել են իրավական ձևակերպման և համապատասխանեցման վերաբերյալ,

դ) Արդարադատության նախարարության մասնագետների կողմից պատրաստվել են նախկին ծրագրերի ներկայացման վերապատրաստման ուղեցույցներ, և իրականացվել է դասավանդողների վերապատրաստում,

ե) Մշակվել է բառարանի բովանդակությունն ու կառուցվածքը,

զ) Կառավարման ծրագիրը ձեռք է բերվել, ներդրվել է և կիրառելի է,

է) Թարգմանության գործընթացի և որակի ապահովման մեխանիզմի, ինչպես նաև՝ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգման օպտիմալացման ուղեցույցներ են մշակվել

ը) Թարգմանությունների կենտրոնի անձնակազմի չորս անդամներ մասնակցել են դեպի ԵՄ թարգմանությունների գլխավոր տնօրինություն, ԵՄ հաստատությունների թարգմանությունների կենտրոն և Քյոլնի կիրառական գիտությունների համալսարան Ճանաչողական այցին, որը հնարավորություն է տվել ուսումնասիրել աշխատանքային տեխնոլոգիաները, փոխանակել Թարգմանությունների կենտրոնի՝ ԵՄ իրավական ակտերի թարգմանության արդեն իսկ լայն փորձը և կապեր հաստատել:

Լրացուցիչ տեղեկատվություն՝